



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
« 15 » հունվարի 2018 թ.

N 02/10.1/363-18

AJV-01-05_2018-01-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-211-13.12.2017-պիմի-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-211-13.12.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապե-
տության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծով (այսուհետ՝ օրենքի նախագիծ) առաջարկվում է «Դատական ակտերի
հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝
օրենք) 44.1-ին հոդվածում, որպես գույքն արգելանքից հանելու հիմք, նախատեսել, որ
**«սուկա է արգելադրված գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի
վերաբերյալ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտ»:**

Օրենքի նախագծի նշված դրույթում անհրաժեշտ է հստակեցնել «այլ անձի սեփա-
կանության իրավունքի վերաբերյալ» ձևակերպումը՝ սահմանելով, որ խոսքը սեփականության
իրավունքի ճանաչման մասին է:

Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ գործող իրավակար-
գավորումների պայմաններում ստացվում է, որ «անձը դիմում է դատարան, դատական
ծախսեր է կատարում, իր սեփականության իրավունքը հաստատում վեճի առարկա
հանդիսացող գույքի նկատմամբ, սակայն օրենքի բացի արդյունքում իր իրավունքը նշված
գույքի նկատմամբ պետական գրանցում չի ստանում, գույքն էլ ... պարտապան
հանդիսացող անձի պարտավորությունների համար մնում է արգելադրված»:

Հարկ ենք համարում առաջարկվող կարգավորումը դիտարկել դատական ակտերի
հարկադիր կատարման ամբողջական գործընթացի համատեքստում՝ վեր հանելով դրա
գործնական իրացման արդյունքում հնարավոր խնդիրները:

Այսպես, դատական ակտերի (հանրային իրավական դրամական պահանջներով՝
վարչական, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ նոտարի կողմից տրված
կատարողական մակագրության թերթի) հարկադիր կատարումը կոչված է ապահովելու

մատնանշված ակտերում ամրագրված փաստերի կատարումը՝ կատարողական վարույթի բոլոր մասնակիցների իրավունքների և օրինական շահերի հաշվառմամբ: Միաժամանակ, այն դեպքում, երբ պարտապանի գույքի վրա արգելանք դնելը շոշափում է այլ անձանց իրավունքները, օրենքը համապատասխան իրավական մեխանիզմ է նախատեսել այդ անձանց իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող *գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում* շահագրգիռ անձն իրավունք ունի *գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով* դիմելու գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Օրենքի նշված դրույթից պարզ է դառնում, որ պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում կազմվում է դատական ակտ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ: Այս տրամաբանությամբ օրենքի 44.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, որպես գույքն արգելանքից հանելու հիմք, նախատեսվել է գույքն արգելանքից հանելու մասին դատարանի որոշումը: Շարադրվածի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ պատահական չէ, որ օրենսդիրը սահմանել է ոչ միայն գույքի պատկանելությանը վերաբերող վեճը լուծելու, այլև հենց (վեճը լուծելու հետ համատեղ) արգելանքից հանելու վերաբերյալ դատական ակտ կազմելու պահանջ: Ուստի, գտնում ենք, որ արգելադրված գույքի վերաբերյալ վեճ ծագելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել օրենքի 45-րդ հոդվածի տրամաբանությամբ:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում առաջարկվող կարգավորումը դիտարկել համատեղ սեփականության ինստիտուտի շրջանակներում: Այսպես, միննույն գույքի նկատմամբ մեկից ավելի անձանց սեփականության իրավունքը ճանաչվելու դեպքում (օրինակ, կատարողական վարույթի պարտապանը վաճառել է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի մի մասը, սակայն գնորդի իրավունքը սահմանված կարգով չի գրանցվել մինչև գույքի նկատմամբ արգելանք կիրառելը), առաջարկվող կարգավորմամբ ստացվում է, որ գույքի նկատմամբ արգելանքը պետք է հանել: Մինչդեռ, նման պարագայում

խախտվում է կատարողական վարույթի պարտատիրոջ իրավունքը, ում նկատմամբ պարտավորության կատարումն ապահովելու նպատակով պարտապանի գույքի նկատմամբ կիրառվել է արգելանք:

Հարկ է նշել, որ օրենքը կարգավորում է բաժնային կամ համատեղ սեփականության մասնակից պարտապանի բաժնի նկատմամբ բռնագանձում տարածելու կարգը, իսկ արգելանք դնելու առումով օրենքը կիրառում է «պարտապանի գույք» ձևակերպումը՝ չնախատեսելով բաժնային կամ համատեղ սեփականության մասնակից պարտապանի գույքի նկատմամբ արգելանք դնելու առանձնահատկությունները:

Հետևաբար, համաձայնելով առաջարկվող փոփոխության ընդհանուր գաղափարին, այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ այն ունի համակարգային բնույթ, ուստի, այն անհրաժեշտ է քննարկել թղթակցվող կարգավորումների հետ համակարգային կապի մեջ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունվարի 2018 թվականի N 1 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-211-13.12.2017-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2018 թ. հունվարի 11
Երևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 44.1-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

5) առկա է արգելադրված գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Անհրաժեշտությունը. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 44.1-րդ հոդվածով հստակ սահմանված են արգելանքի տակ գտնվող գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանելու որոշակի հիմքեր: Իսկ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ստացվում է, որ, հարկադիր կատարողը, հանդիսանալով պետական մարմին, իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ եւ օրենքներով, իսկ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի 44.1-րդ հոդվածով արգելանքի տակ գտնվող գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանելու հիմքերից բացի պրակտիկայում հանդիպում են նաեւ գույքն արգելանքից հանելու այլ հիմքեր:

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները ներկայումս. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իրավունք:

Բազմաթիվ են դեպքերը, երբ անձը, դիմում է իրավասու դատարան գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով, դատական կարգով պահանջը բավարարվում է, անձը դիմում է համապատասխան լիազոր մարմին սեփականության

իրավունքը գրանցելու համար, սակայն պարզվում է, որ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը չի կարող գրանցվել, քանի որ տվյալ գույքի նկատմամբ առկա է ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից կիրառված արգելանք: Անձը նշված վճիռը ներկայացնում է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն գույքն արգելանքից հանելու համար, սակայն ԴԱՀԿ ապահովող ծառայությունն էլ իր հերթին մերժում է՝ պատճառաբանելով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հստակ են սահմանված գույքն արգելանքից հանելու հիմքերը, իսկ նշված պարագայում նման հիմքը բացակայում է: Ստացվում է, որ անձը դիմում է դատարան, դատական ծախսեր է կատարում, իր սեփականության իրավունքը հաստատում վեճի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ, սակայն օրենքի բացի արդյունքում իր իրավունքը նշված գույքի նկատմամբ պետական գրանցում չի ստանում, գույքն էլ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում հարուցված համապատասխան կատարողական վարույթով պարտապան հանդիսացող անձի պարտավորությունների համար մնում է արգելադրված: Այս ամենը հանգեցնում է նրան, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև՝ անձի սեփականության իրավունքի իրացումը մնում են անկատար: Եվ տվյալ անձը ստիպված է լինում կրկին դիմել իրավասու դատարան՝ այս անգամ գույքն արգելանքից հանելու պահանջով:

Կարգավորման նպատակը. Կարգավորման նպատակն է իրավական երաշխիքներ ստեղծել անձանց սեփականության սահմանադրական իրավունքների իրացման համար:

Ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման պարագայում կերաշխավորվի անձանց սեփականության իրավունքը օրինական հիմքով ձեռք բերած գույքի նկատմամբ, կթեթեանա դատարանների ծանրաբեռնվածությունը՝ գույքն արգելանքից հանելու պահանջով հայցադիմումների մասով, իսկ ԴԱՀԿ ապահովող ծառայությանը հնարավորություն կընձեռվի օրենքի շրջանակներում որոշումներ կայացնել գույքն արգելանքից հանելու համար, կընդլայնվի գույքն արգելանքից հանելու հիմքերի շրջանակը: